

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ
2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի՝ ՀԵՌԱԿԱ ԿԱՐԳՈՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ՆԻՍՏԻ

ք. Երևան

«17» մարտի 2025թ.

2025 թվականի մարտի 14-ին տեղի ունեցավ «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) հոգաբարձուների խորհրդի (այսուհետ նաև՝ ՀԽ) նիստ՝ հեռակա քվեարկությամբ:

Օրակարգում ընդգրկված հարցի վերաբերյալ համապատասխան նյութերը նախապես ներկայացվել էին Հոգաբարձուների խորհրդի անդամներին «Mulberry 2.0» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի միջոցով:

Օրակարգում ընդգրկված էր հետևյալ հարցը.

1. «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի 2025 թվականի բյուջեի (նախահաշիվների) հաստատում:

Քվեարկությանը մասնակցել են՝

- | | |
|-----------------|---|
| Դ. Խուդաբայան | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար, ՀԽ նախագահ |
| Ս. Թովմասյան | ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավար, ՀԽ անդամ |
| Ա. Հովհաննիսյան | ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության պետ, ներքին գործերի նախարարի տեղակալ, ՀԽ անդամ |
| Ա. Ադիլխանյան | ՀՀ փոխվարչապետի գրասենյակի ղեկավար, ՀԽ անդամ |
| Ք. Ղալեչյան | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ (ճանապարհային ոլորտը համակարգող), ՀԽ անդամ |
| Ա. Ավանեսյան | ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ, ՀԽ անդամ |
| Գ. Խաչատրյան | ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավար, ՀԽ անդամ |
| Ա. Խաչատրյան | Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման |

և ենթակառուցվածքների նախարարի խորհրդական
(ճանապարհաշինության ոլորտի մասով), ՀԽ անդամ

Քվեարկությանը չեն մասնակցել՝

Ե. Վարդանյան ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ղեկավար, ՀԽ անդամ

Ն. Հովակիմյան ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ, ՀԽ անդամ

Քվեարկությունը համարվում է կայացած:

Քվեարկության արդյունքները՝ 7 կողմ, 1 դեմ:

ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Ա. Ավանեսյանը օրակարգում ընդգրկված հարցին քվեարկել է դեմ՝ հետևյալ դիտարկմամբ. «1049 ծրագրի «11004. Ավտոմոբիլային ճանապարհների ցանցի հսկողություն, ուսումնասիրություններ և փորձաքննություններ» միջոցառման նախահաշվի.

ա/ եկամուտների մասում 2025 թվականի պետական բյուջեով Հիմնադրամին համանուն միջոցառմամբ հատկացվող գումարը (305.0 մլն դրամ) և ձեռնարկատիրական գործունեությունից ստացվող եկամուտները (220.0 մլն դրամ) տարանջատված են, իսկ ծախսերի մասում (ըստ ծախսային հոդվածների) դրանք տարանջատված չեն, որը հնարավորություն չի ընձեռում հաստատվող ծախսերը համադրել 2025թ. պետական բյուջեով հաստատված գումարի (գումարը հատկացվել է «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» հոդվածով) հաշվարկում ներառված ծախսերի հետ: Այդ կապակցությամբ առաջարկում ենք 1049 ծրագրի 11004 միջոցառման նախահաշվում ծախսերը տարանջատել ըստ ֆինանսավորման աղբյուրների:

բ/ Նախահաշվով 525.0 մլն դրամ եկամուտների և 600.6 մլն դրամ ծախսերի պարագայում դեֆիցիտը կազմում է 75.6 մլն դրամ, որի ծածկման աղբյուր է դիտարկվել տարեսկզբի ազատ մնացորդը՝ շուրջ 69.2 մլն դրամը (ձեռնարկատիրական գործունեությունից), իսկ շուրջ 6.4 մլն դրամ դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրը հստակեցված չէ:

Այդ կապակցությամբ առաջարկում ենք հստակեցնել 6.4 մլն դրամի ֆինանսավորման աղբյուրը կամ վերանայել Նախահաշվով նախատեսված եկամուտներն ու ծախսերը:

զ/ Անհրաժեշտ է ուղղել 1049 ծրագրի 11004 միջոցառման նախահաշվի 1-ին կիսամյակի և 9 ամսվա ցուցանիշները (ներկայացված են 2-րդ եռամսյակի և 3-րդ եռամսյակի գումարները) և դրանք փոխարինել աճողական ցուցանիշներով:»:


Դիտարկման «ա» կետը չի ընդունվել՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ գանձապետական ծրագրում ձեռնարկատիրական գործունեությունից ստացվող եկամուտների և պետական բյուջեով հաստատված դրամաշնորհի համար գործում է մեկ ընդհանուր հաշիվ: Տարանջատման հարցը կդիտարկվի 2026 թվականի բյուջեի նախահաշիվների կազմման ժամանակ:

Ինչ վերաբերում է դիտարկման «բ» և «գ» կետերին, ապա դիտարկումներն ընդունվել են, կատարվել են համապատասխան խմբագրումներ:

Հեռակա կարգով քվեարկության արդյունքում Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշեց.

1. Հաստատել «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի 2025 թվականի բյուջեն (նախահաշիվները):

Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝



Դ. Խուղաթյան

Հոգաբարձուների խորհրդի քարտուղար՝



Ա. Հայրապետյան